Լրացուցիչ ապահովության եկամուտները (SSI)

Բովանդակություն

Ի՞նչ է SSI-ը	1
Բժշկական օգնություն	2
Լրացուցիչ պարենային օգնության ծրագիր (SNAP)	2
Այլ սոցիալական ծառայություններ	2
SSI ամսական վճարումները	2
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

Ի՞նչ է SSI-ը

Լրացուցիչ ապահովության եկամուտները (SSI) դաշնային ծրագիր է, որն ամսական դրամական վճարումներ է կատարում կարիքավոր անձանց: Ծրագիրը նախատեսված է 65 տարեկանը լրացած անձանց, ինչպես նաև ցանկացած տարիքի կույրերի ու հաշմանդամների համար, ներառյալ երեխաները:

SSI-ի իրավունք ունենալու համար դուք նաև պետք է քիչ կամ առանց եկամուտի և սահմանափակ հնարավորութեուններով անձ լինեք: Ձեր սեփական գույքը չպետք է գերազանցի $2,000 ԱՄՆ դոլարը՝ միայնակ անձանց դեպքում, կամ $3,000 ԱՄՆ դոլարը՝ համատեղ ապրող ամուսնական զույգերի համար: Մենք հաշվի չենք առնում ձեր տան արժեքը, եթե դուք ապրում եք այնտեղ, և սովորաբար չենք հաշվառում ձեր ավտոմեքենայի արժեքը: Մենք կարող ենք չհաշվառել նաև այլ սեփական գույքը, օրինակ՝ գերեզմանատեղի արժեքը:

SSI ստանալու համար դուք պետք է դիմեք նաև այլ պետական նպաստներ ստանալու համար, եթե դրա իրավունքն ունեք: SSI ստանալու համար դուք պետք է բնակվեք ԱՄՆ-ում կամ Հյուսիսային Մարիանյան կղզիներում: Եթե դուք ԱՄՆ-ի քաղաքացի չեք, բայց օրինական եք բնակվում ԱՄՆ-ում, ապա կարող եք SSI ստանալու հնարավորություն ունենալ: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք Լրացուցիչ ապահովության եկամուտները (SSI) ԱՄՆ քաղաքացիություն չունեցող անձանց համար հրապարակմանը (Հրատարակություն No. AM-05-11051)՝ *Supplemental Security Income* (SSI) for Noncitizens (Publication No. AM-05-11051):

Կալիֆորնիա նահանգը դաշնային վճարումներին ավելացնում է իր մասնաբաժինը: Միանվագ վճարը, որը

դուք ստանում եք յուրաքանչյուր ամսվա սկզբին, ներառում է ինչպես դաշնային SSI վճարումները, այնպես էլ Կալիֆորնիայի լրացուցիչ վճարները:

Բժշկական օգնություն

Եթե դուք ստանում եք SSI, ապա, որպես կանոն, ինքնաբերաբար իրավունք ունեք նաև բժշկական օգնություն (Medi-Cal) ստանալ: Առանձին Medi-Cal դիմումի ներկայացում չի պահանջվում: Եթե հարցեր ունեք Medi-Cal-ի վերաբերյալ, ապա խնդրում ենք դիմել ձեր տեղական վարչաշրջանային առողջապահական կամ սոցիալական ծառայությունների գրասենյակ:

Լրացուցիչ պարենային օգնության ծրագիր (SNAP)

Անձիք, որոնք ստանում են SSI Կալիֆորնիայում, չեն կարող SNAP նպաստ ստանալ՝ նախկինում հայտնի պարենային կտրոնների ծրագիր, քանի որ պետությունը դաշնային SSI վճարումներին իր մասնաբաժինն է ավելացնում:

Սակայն դուք իրավունք ունեք SNAP ծրագրով նպաստներ ստանալ՝

- Մինչև ձեր SSI դիմումի վերաբերյալ որոշման ընդունումը,
- Եթե ձեր SSI դիմումը մերժվել է,
- Եթե տեղափոխվել եք այլ նահանգ կամ
- Եթե 2016 թ.-ի օգոստոս ամսվա սկզբից ձեր SSI վճարումները ընդհատվել կամ դադարեցվել են:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ձեր տեղական վարչաշրջանային առողջապահական կամ սոցիալական ծառայությունների գրասենյակ:

Այլ սոցիալական ծառայություններ

Այն անձիք, որոնք իրավասու են SSI ստանալու, հաճախ իրավունք ունեն օգտվել տեղական վարչաշրջանային առողջապահական կամ սոցիալական ծառայությունների գրասենյակի լրացուցիչ ծրագրերից և ծառայություններից: Այս ծառայությունները կամ նպաստները ներառում են՝

- Կույրերին կամ հաշմանդամներին օգնական շներ տրամադրելու հատուկ նպաստի ծրագիրը,
- Որոշ տնային և անհատական խնամքի ծառայություններ՝ բոլոր տարեց, կույր կամ սեփական խնամքից զուրկ և իրենց տանը անվտանգ ապրելու հնարավորությունից զուրկ իրավասու անձանց, եթե նման ծառայությունների մատուցման անհրաժեշտություն կա և
- Պաշտպանական ծառայությունները:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ձեր տեղական վարչաշրջանային առողջապահական կամ սոցիալական ծառայությունների գրասենյակ:

SSI ամսական վճարումները

Ստորև աղյուսակում նշված են դաշնային և պետական միասնական վճարումների չափերը: SSI հասցեատերերից ոչ բոլորն են առավելագույն վճար ստանում: Ձեր վճարը կարող է նվազել, եթե այլ եկամուտներ ունեք:

Կարգ	2018 թ. ամսական ընդհանուր վճարը		
Միայնակ անձ	***Տարեց***	***Հաշմանդամ***	***Կույր***
Կարիքավոր կարգավիճակ	$910.72	$910.72	$967.23
Տանից դուրս ոչ բժշկական խնամք	$1,173.37	$1,173.37	$1,173.23
Կարիքավոր կարգավիճակ, խոհանոցի բացակայություն	$997.04	$997.04	N/A
Այլ անձի ընտանիքում բնակություն	$664.24	$664.24	$720.76
Անչափահաս հաշմանդամ երեխա		$ 815.15	
Այլ անձի ընտանիքում բնակվող անչափահաս հաշմանդամ երեխա		$ 568.67	
Տարեց կամ հաշմանդամ ամուսիններ			
Կարիքավոր կարգավիճակ	$1,532.14		
Տանից դուրս ոչ բժշկական խնամք	$2,346.74		
Կարիքավոր կարգավիճակ, խոհանոցի բացակայություն	$1,704.77		
Այլ անձի ընտանիքում բնակություն	$1,162.41		
Կույր ամուսիններ			
Կարիքավոր կարգավիճակ			$1,683.19
Այլ անձի ընտանիքում բնակություն			$1,313.46
Տանից դուրս ոչ բժշկական խնամք			$2,346.74
Կույր անձ՝ տարեց կամ հաշմանդամ կնոջ/ամուսնու հետ			
Կարիքավոր կարգավիճակ			$1,625.65
Այլ անձի ընտանիքում բնակություն			$1,255.92
Տանից դուրս ոչ բժշկական խնամք			$2,346.74
Կենսագործունեությունը Medicaid հաստատության տարածքում			
Միայնակ անձ	$51.00	$51.00	$51.00
Ամուսնական զույգ	$102.00	$102.00	$102.00

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-11125-AM | January 2018
Լրացուցիչ ապահովության եկամուտները (SSI)
Supplemental Security Income (SSI) in California (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: